«ԱՐՎԵՍՏԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ», *2021, № 1, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 245 էջ; 2021, № 2, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 276 էջ*:*

Բանալի բառեր՝ «Արվեստագիտական հանդես», ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, երաժշտագիտություն, կերպարվեստագիտություն, թատերագիտություն, կինոգիտություն, ճարտարապետագիտություն:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս են տեսել ինստիտուտի գիտական պարբերականի՝ «Արվեստագիտական հանդեսի» (գլխավոր խմբագիր՝ արվ. դ., պրոֆ. Աննա Ասատրյան) 2021 թ. երկու համարները:



Ինչպես 2019 թ. հրատարակված «Արվեստագիտական հանդեսի» անդրանիկ համարի «Վաղուց պահանջված գիտական հանդես» ներածական հոդվածում նշել է ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվ. դ., պրոֆ. Արարատ Աղասյանը, ««Արվեստագիտական հանդեսի» էջերում կլուսաբանվեն հայ արվեստի ու ճարտարապետության խնդիրները, ինչպես նաև հայ ժողովրդի մշակութային կապերը մյուս ժողովուրդների հետ: Հանդեսը լայնորեն կլուսաբանի Հայաստանի Հանրապետության արվեստագիտական և մշակութային նվաճումները ... Պարբերականի ուշադրության կենտրոնում կգտնվեն նաև գեղարվեստական կյանքի արդի հիմնախնդիրները, Հայաստանի և Արցախի Հանրապետություններում և հայկական Սփյուռքում ընթացող գեղարվեստական պրոցեսները, դրանց հետազոտության ու գիտատեսական իմաստավորման խնդիրները:

Միանգամայն տրամաբանական է, որ «Արվեստագիտական հանդես»-ը ստեղծվում է հենց ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում, որը հայ արվեստագիտության գլխավոր կենտրոնն է, այն միակ գիտական օջախը, որտեղ կատարվող ուսումնասիրությունների կարևոր ուղղություններն են հայ արվեստի գրեթե բոլոր տեսակների (կերպարվեստ, ճարտարապետություն, դեկորատիվ և կիրառական արվեստներ, երաժշտություն, թատրոն, կինո և հեռուստատեսություն) պատմության և տեսության հիմնահարցերը: 60-ամյա այս ինքնատիպ գիտահետազոտական հիմնարկում աշխատանքներ են տարվում հայ արվեստի դասականների ստեղծագործական, հուշագրային, նամակագրական ժառանգության ակադեմիական հրատարակման ուղղությամբ:

---

* *Ներկայացվել է 14. II. 2022 թ., ընդունվել է տպագրության 03. III. 2022 թ.:*

Վերը նշված նպատակներն իրականացնելու համար մեր վեցամսյա պարբերականը մտադիր է իր շուրջը համախմբել հայ արվեստով զբաղվող առաջատար արվեստագետների:

«Արվեստագիտական հանդես»-ի առաքելությունն է արվեստաբան-գիտնականների համատեղ ուժերով ու ջանքերով նոր լիցք հաղորդել հայ ժողովրդի արվեստի և ճարտարապետության ուսումնասիրության աշխատանքներին, նպաստել արվեստագիտության հետագա զարգացմանն ու վերելքին, արվեստագիտության մեջ հանգուցային հարցերի անաչառ ու սկզբունքային լուսաբանմանը»[1]*:*

Հանդեսը, որի խմբագրական խորհրդում ընդգրկված են վաստակաշատ գիտնականներ Հայաստանից, Ռուսաստանից, Ուկրաինայից և Բելառուսից, ունի «Հոդվածներ, հաղորդումներ», «Հրապարակումներ», «Գրախոսություններ», «Մեր երախտավորները», «Մեր հոբելյարները», «Գիտական լրատու» և «Ստեղծագործում են արվեստաբանները» բաժինները: Գիտական պատշաճ մակարդակով արդիական հոդվածները հրատարակվում են հայերեն, ռուսերեն և անգլերեն եռալեզու ամփոփումներով:

Հանդեսի 2021 թ. 1-ին համարի ներածական հոդվածը լուսաբանեց ՀՀ ԳԱԱ նախագահի, ԳԱԱ փոխնախագահի և ակադեմիկոս-քարտուղարի, ԳԱԱ բաժանմունքների ակադեմիկոս-քարտուղարների և ԳԱԱ նախագահության անդամների ընտրությունները: 2-րդ համարն արձանագրեց Արվեստի ինստիտուտի կյանքում տեղ գտած երկու նշանակալի իրադարձություն: Առաջինը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, արվ. դ., պրոֆ., Արվեստի ինստիտուտի երկարամյա տնօրեն, գիտական, գիտակազմակերպչական, մանկավարժական գործունեությամբ հայ արվեստագիտության մեջ մեծ ավանդ բերած Ա. Աղասյանի՝ ինստիտուտի առաջին գիտական ղեկավարի պաշտոնում ընտրվելու մասին լուրն էր և նրա վաստակին հակիրճ անդրադարձը: «Գիտական լրատու» բաժնում Ա. Ասատրյանը ռուսերեն լուսաբանեց ինստիտուտի միջազգային հաջողված համագործակցությունը. այսպես՝ Արվեստի ինստիտուտը 2021 թ. նոյեմբերի 23–25-ը Դոնի Ռոստովի Հարավային դաշնային համալսարանի կազմակերպած «Архитектура и искусство: от теории к практике» *խորագրով միջազգային գիտագործնական կոնֆերանսի շրջանակներում, որի համակազմակերպիչներից էր նաև ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը, նոյեմբերի 24-ին կազմակերպեց Կլոր սեղան «Հայոց Սիլուռքի կենտրոնների արվեստը. ուսումնասիրման և պահպանման հիմնահարցերը» խորագրով (համակազմակերպիչ՝ Մոսկվայի Ճարտարապետության և քաղաքաշինության տեսության և պատմության գիտահետազոտական ինստիտուտ), որի կազմկոմիտեում ընդգրկվել էին Ա. Աղասյանն ու Ա. Ասատրյանը: Ա. Աղասյանը Կլոր սեղանի համանախագահն էր: Աշխատանքներին մասնակցում էին մասնագետներ Մոսկվայից, Դոնի Ռոստովից ու Երևանից:*

Արդիական և հետաքրքրական են 1-ին համարում «Հոդվածներ, հաղորդումներ» բաժնի «Երաժշտագիտություն» ենթաբաժնի գիտական հոդվածնե-

---

[1] *Ա. Աղասյան. Վաղուց պահանջված գիտական հանդես. – «Արվեստագիտական հանդես», 2019, № 1, էջ 5–6:*

ը, որոնք կարևոր ներդրում դարձան երաժշտական կոմիտասականում: Աննա Ասատրյանը հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ անդրադարձավ կոմիտասագետների ուշադրությունից վրիպած՝ հայ գրող, հրապարակախոս և գրաքննադատ Արփիար Արփիարյանի՝ Կոմիտասի մասին տպագրված առաջին հոդվածին («Սողոմոն Սարկաւագ».— «Հայրենիք» օրաթերթ, 1892 թ. նոյեմբերի 21): Կոմիտասի ստեղծագործության մեջ գերմանական որոշակի ազդեցություններին, մասնավորապես՝ Կոմիտասի լարային կվինտետում Բեթհովենի Op. 57 սոնատի թեմատիկ մոտիվի ակնհայտ նմանման, ինչպես նաև Կոմիտասի և Բեթհովենի ստեղծագործության մեջ Վ. Գյոթեի երկու բանաստեղծությունների երաժշտական մարմնավորման չուսումնասիրված խնդիրներին էր նվիրված արվ. թ. Տաթևիկ Շախկուլյանի հետազոտությունը: Արվ. թ. Մարիաննա Տիգրանյանը հայ երաժշտագիտության մեջ առաջին անգամ համակողմանիորեն ուսումնասիրեց Կոմիտասի ձայնագրած «Մշեցոց Բինգյոլը»՝ այն համեմատելով հայ ժողովրդապրոֆեսիոնալ երգաստեղծության մեջ մեծ տարածում գտած «Բինգյոլների» բոլոր տարբերակների հետ: Հայ ժամանակակից երաժշտության, մասնավորապես՝ Կոմիտասին և Հայոց ցեղասպանությանը նվիրված Տիգրան Մանսուրյանի երկերը վերլուծեց արվ. դ., պրոֆ. Աննա Արևշատյանը՝ բնորոշելով Մանսուրյանին որպես Կոմիտասի ավանդույթների ժառանգորդ ու նորարար: Առնո Բաբաջանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանի շրջանակներում արվ. թ., դոցենտ Աննա Թամիրոզյանը քննության է առել Ա. Բաբաջանյանի Ջութակի և դաշնամուրի սոնատի կոմպոզիցիոն որոշ առանձնահատկությունների արտացոլման հայեցակարգը:

«Թատերագիտություն և կինոգիտություն» ենթաբաժնում արվ. թ. Անահիտ Զեյանը հանգամանորեն ներկայացրեց իրանահայ թատերական գործիչ և կինոգործիչ Արբի Հովհաննիսյանի ստեղծագործական գործունեությունը, նրա վաստակն ինչպես իրանահայ թատերական արվեստում, այնպես էլ Իրանի կինոարվեստում: Արվ. դ. Նազենիկ Սարգսյանը համալիր ուսումնասիրության ենթարկեց Սրբուհի Լիսիցյանի գործունեությունը XX դարի 10–20-ական թվականների, մասնավորապես՝ 1917-ին նրա հիմնադրած Թիֆլիսի «Ամուսնքի ռիթմի և պլաստիկայի ստուդիան», որը 1923-ին վերանվանվեց «Ռիթմի և պլաստիկայի ինստիտուտ»:

Բովանդակային և ժամանակագրական բավականին լայն ընդգրկում ունեն «Կերպարվեստագիտություն» ենթաբաժնի հոդվածները: Այսպես, արվ. թ. Արթուր Ավագյանը և Մերի Կիրակոսյանը Արվեստի ինստիտուտի հիմնադրման 80-ամյակին ընդառաջ՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի՝ հայ արվեստագիտության գլխավոր օջախի, հայ արվեստագիտության մեջ ներդրման բացահայտմանը նվիրված ուսումնասիրությունների շրջանակներում առաջին անգամ լուսաբանեցին ինստիտուտի ներդրումը նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի ուսումնասիրության մեջ (Ա. Ավագյան) և ինստիտուտի կազմակերպած միջազգային հինգ սիմպոզիումներն ու դրանց դերը նոր և նորագույն շրջանների հայ կերպարվեստի ուսումնասիրման գործում (Մ. Կիրակոսյան): Իր հետաքրքիր և արդիական անդրադարձ հոդվածում Անի Մարգարյանը (Չինաստան) բացահայտել է կորոնավիրուսային համաճարակի ազդեցությունն արվեստի աշխարհի վրա: Հնագույն շրջանի՝

Ուրարտուի (Վանի թագավորության) կերպարվեստում դիմահայաց պատկերագրության դրսևորումների մասին է Գայանե Պողոսյանի հոդվածը: Համակողմանիորեն անդրադառնալով քաղաքական ծաղրանկարի ժանրին՝ արվ. թ., դոցենտ Սաթենիկ Մելիքյանը քննության է առել դրա յուրահատկությունը բացահայտող սահմանումները, ժանրաթեմատիկ առանձնահատկությունները և ոճակատարողական հատկանիշները: Համարի «Ճարտարապետագիտություն» բաժնում արվ. թ., դոցենտ Մարտին Հարությունյանն անդրադարձել է Երևան քաղաքի այգիների ճարտարապետադիզայներական խնդիրներն ու առաջարկել դրանց բարելավման ուղիները: Արդիական է նաև ճարտ. թ. Արև Սամուելյանի՝ Հայաստանի պատմական մայրաքաղաք Դվինի պահպանության և թանգարանացման կազմակերպման հիմնախնդիրները բարձրաձայնող և լուսաբանող հոդվածը:

Հատուկ հիշատակելի է համարի «Արվեստի փիլիսոփայություն» բաժնում զետեղված՝ Գեորգ Վիլհելմ Ֆրիդրիխ Հեգելի ծննդյան 250-ամյա հոբելյանի կապակցությամբ փ. գ. դ. Գրիգոր Ասատրյանի ուսումնասիրությունը, որում քննության են առնվել արվեստի դերի մասին Հեգելի դատողությունները:

2021 թ. նոյեմբերի 1-ին լրացավ հայ ականավոր կոմպոզիտոր, դիրիժոր և երաժշտական-հասարակական գործիչ Ալեքսանդր Սպենդիարյանի (1871–1928) ծննդյան 150-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ «Արվեստագիտական հանդեսի» 2021 թ. 2-րդ համարը բացվեց «Ալեքսանդր Սպենդիարյան – 150» ենթաբաժնով, որտեղ տեղ գտան նրան նվիրված 4 ուսումնասիրություններ՝ Ա. Ասատրյանի «ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը ակադեմիական սպենդիարյանագիտության կայացման ու զարգացման գործում», ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ. Ալլիտա Դոլուխանյանի «Ալեքսանդր Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի լիբրետոն և Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմը», արվ. թ. Տատյանա Բրոսլավսկայայի (ՌԴ, Սանկտ Պետերբուրգ) «Ժողովրդական գործիքային ավանդույթների կերպափոխությունները Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործական էվոլյուցիայում» և արվ. թ. Լիլյա Բորոդովսկայայի (ՌԴ, Թաթարստանի Հանրապետություն, Կազան) «Ալեքսանդր Սպենդիարյանի «Ղայթարմայի» մեկնությունները Թաթարստանի Հանրապետության ժամանակակից կատարողների արվեստում» հետազոտությունները, որոնք կարևոր քայլ դարձան միջազգային սպենդիարյանագիտության ասպարեզում:

Հայ երաժշտության նորագույն շրջաններին են առնչվում Աննա Ասատրյանի և Տաթևիկ Շախկուլյանի հոդվածները: 44-օրյա պատերազմի հերոսների հիշատակին նվիրված «Հայոց ցեղասպանության արձագանքները Արամ Սաթյանի ստեղծագործության մեջ» հոդվածում Ա. Ասատրյանը քննության առավ կոմպոզիտորի «Զինար ես» և «1915» ստեղծագործությունները: Առնո Բաբաջանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին նվիրված հոդվածում Տ. Շախկուլյանը բացահայտեց դոդեկաֆոնիայի կամ տասներկուտոնային համակարգի կիրառումը հայ երաժշտության, մասնավորապես՝ Ա. Բաբաջանյանի ստեղծագործության մեջ: Հայ երաժշտական քննադատության ուսումնասիրությանը, հատկապես՝ XIX դարավերջին Փարիզում հրատարակվող «Անահիտ» հանդեսում հայ երաժշտական իրադարձությունների և հայ երաժիշտների գործունեության լուսաբանմանն էր նվիրված

արվ. թ., դոցենտ Աննա Ադամյանի հոդվածը: Երաժշտական արևելագիտության ասպարեզում բազմավաստակ գիտնական, կոմպոզիտոր և մանկավարժ Քրիստափոր Քուչնարյանի վաստակի, նրա «Հայ մոնոդիկ երաժշտության պատմության ու տեսության հարցերը» հիմնարար աշխատության մեջ առաջադրված դրույթների և սկզբունքային ելակետերի ուսումնասիրության հեղինակն է արվ. դ., պրոֆ. Լիլիթ Երնջակյանը: Անի Հակոբյանը հայ ակադեմիական երաժշտագիտության մեջ առաջին անգամ ուսումնասիրել է սփյուռքահայ երաժշտագետ-բանահավաք, խմբավար և հասարակական գործիչ, Բարսեղ Կանաչյանի սան Պետրոս Ալահայտոյանի ստեղծագործական գործունեությունը: Հետազոտության իրականացման համար առիթ դարձավ այն, որ Ալահայտոյանը 2020 թ. իր գրառած հսկայածավալ ժառանգության կարևոր մասը՝ 430 տուփ մագնիտոֆոնային ձայնագրություն և 125 տուփ մագնիտոֆոնային ժապավեն, նվիրաբերեց Արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվան ձայնադարանին: Նազենիկ Սարգսյանը համեմատական քննության ենթարկեց Միխայիլ Լերմոնտովի «Դիմակահանդես» դրաման և Էդգար Հովհաննիսյանի համանուն պարտիտուրը՝ «Դիմակահանդեսը» դիտարկելով որպես թատերական երաժշտության վրա կառուցված բալետ-պարաֆրազ: Շատ գնահատելի և հույժ կարևոր է, որ հանդեսի հոդվածներից մեկը նվիրված է Արցախի՝ Վարանդայի տարածաշրջանի (ներկայիս Մարտունու շրջան) երաժշտական լեզվամտածողությանը, մասնավորապես՝ հոռովելներին բնորոշ առանձնահատկությունների լուսաբանմանը՝ Կոմիտասի, Ռոբերտ Ամբայանի և Մաթևոս Մուրադյանի՝ արցախյան հոռովելների գրառումների համեմատական վերլուծության հիման վրա: Մարիաննա Տիգրանյանը և Լինդա Սարգսյանը հրապարակել են Ռ. Ամբայանի՝ 1957 թ. Արցախ կատարած գիտարշավի ժամանակ ձայնագրված հոռովելը:

«Թատերագիտություն և կինոգիտություն» ենթաբաժնում Սերգեյ Փարաջանովի «Նռան գույնը», Արտավազդ Փելեշյանի «Մենք» և Համո Բեկնազարյանի «Պեպո» ֆիլմերի օրինակների հիման վրա արվ. թ. Արսեն Համբարձումովը վերլուծում է դատարկ կադրի՝ ֆիլմի համատեքստում նշանակության և իմաստի մասին: Անահիտ Զեյանի հոդվածում ուսումնասիրության ենթարկվեց իրանահայ թատերական գործիչ՝ ռեժիսոր, դերասան, նկարիչ, ճարտարապետ ու երգիչ Մկրտիչ Թաշճյանի ստեղծագործական գործունեությունը և նշանակալի ներդրումը իրանահայ թատրոնի ասպարեզում:

Հետաքրքիր և արդիական հոդվածներով է հագեցած «Կերպարվեստագիտություն» ծավալուն ենթաբաժինը: Սփյուռքահայ, մասնավորապես՝ ֆրանսահայ արվեստին է նվիրված արվ. դ., պրոֆ. Արա Հակոբյանի հոդվածը, որը ուսումնասիրել և գիտական հանրությանն է ներկայացրել նկարիչ-արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանի՝ Փարիզի Նուբարյան գրադարանի ու Փարիզի հայ ուսանողների տան գլխավոր սրահների որմնանկարների վերաբերյալ ուսումնասիրությունը: Միջնադարյան կերպարվեստին՝ հայ և ռուսական արվեստում «Աստվածամոր Վերափոխման» պատկերագրության առանձնահատկությունների դիտարկմանն է նվիրված արվ. թ., դոցենտ Սեյրանուշ Մանուկյանի հոդվածը: Անի Մարգարյանի իր թեմատիկայով եզակի անդլալեզու հոդվածում քննության են ենթարկվում չին կայսրուհի

Ցրսիի՝ ամերիկյան նկարիչներ Քեթրին Ա. Կառլի և Հուբերտ Վոսի վրձնած դիմանկարները XX դարասկզբի ամերիկյան արվեստի ու աշխարհընկալման համատեքստում: Ենթաբաժնի մյուս հոդվածները նվիրված են նոր և նորագույն շրջանի հայ կերպարվեստի ուսումնասիրությանը: Արվ. թ. Մանե Մկրտչյանը Սարյանի գրառումների և ժամանակի սիմվոլիստական մտքի հետ համեմատությունների հիման վրա իմաստաբանական վերլուծության է ենթարկել Մարտիրոս Սարյանի՝ 1907 թ. ստեղծած «Գիսաստղը»: Արվ. թ. Ալիս Ներսիսյանը համակողմանի արվեստաբանական վերլուծության է ենթարկել խորհրդային նկարիչ Դմիտրի Նալբանդյանի ստեղծագործությունը: Արվ. թ. Հռիփսիմե Վարդանյանն ուսումնասիրել է հայ գրող, հրապարակախոս, սցենարիստ, դրամատուրգ, ռեժիսոր, գեղանկարիչ, շուրջ 150 գեղանկարչական և 40 գրաֆիկական աշխատանքների հեղինակ Աղասի Այվազյանի նկարչական ժառանգությանը:

Ուշագրավ է «Ճարտարապետագիտության» ենթաբաժնում պ. գ. թ. Օլգա Բաևայի (ՌԴ, Դոնի Ռոստով) հոդվածը, որում ներկայացրել է Դոնի Նախիջևանի քաղաքային ճարտարապետ Նիկոլայ Նիկիտիչ Դուրբախի (Դուրբախյան) ավանդը Դոնի Նախիջևանի ճարտարապետության մեջ:

«Արվեստագիտական հանդեսի» կարևոր արժանիքներից է «Հրապարակումներ» բաժինը: Հանդեսի 1-ին համարում հայ անվանի ջութակահար և մանկավարժ, Պետերբուրգի (այնուհետև՝ Լենինգրադի) կոնսերվատորիայի պրոֆեսոր, ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Հովհաննես Նալբանդյանի (1871–1937) հոբելյանին ընդառաջ հրապարակվել և գիտական հանրությանն են ներկայացվել հատվածներ իսպանացի աշխարհահռչակ ջութակահար ու կոմպոզիտոր Պաբլո Սարասատեի մասին նրա՝ ՀՀ գրականության և արվեստի թանգարանում պահվող անտիպ հուշագրությունից (առաջաբանի հեղինակ՝ Ա. Աստրյան): Ուշագրավ է, որ այս հրապարակումը մեծ հետաքրքրություն առաջացրեց ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի և Գերմանիայի երաժիշտների շրջանում: Նույն համարում հրապարակվեցին ՀՀ գրականության և արվեստի թանգարանում պահվող Նալբանդյանի անտիպ հուշերը մեկ այլ մեծանուն ջութակահարի, մանկավարժի, կոմպոզիտորի և դիրիժորի՝ հունգարացի Յոզեֆ Յոախիմի մասին՝ նվիրելով այն վերջինիս ծննդյան 190-ամյա հոբելյանին:

Հանդեսի 2-րդ համարի «Հրապարակումներ» բաժնում «Արվեստաբաններ-ի կենսագրությունները փաստաթղթերում» խորագրի ներքո (առաջաբանի հեղինակ՝ պ. գ. թ. Ստեփան Ղարիբջանյան) հրապարակվեցին հայ անվանի բանաստեղծ, արվեստաբան, ՀԽՍՀ արվեստի առաջին վաստակավոր գործիչ, խմբագիր, մանկավարժ, պրոֆ. Գարեգին Լևոնյանի ինքնակենսագրությունը, ինչպես նաև նրա մասին ՀՍՍՌ գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի դիրեկտորի պաշտոնակատար ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյանի անտիպ բնութագիրը: Լևոնյանի կենսագրության և բնութագրի հետ ներկայացվեց արվ. դ., հայագիտության մեջ մեծ ավանդ բերած խոշոր ռուս գիտնական Նիկոլայ Տոկարսկուն ակադեմիկոս Հովսեփ Օրբելու և Էրմիտաժի տնօրենի տեղակալ Տիմոֆեևի կողմից տրված ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի արխիվի անտիպ բնութագրերը:

Հանդեսի 1-ին համարում գրախոսվեցին Արարատ Աղասյանի «Արվեստի պատմություն. կերպարվեստ» (հեղինակ՝ արվ. թ. Մարգարիտա Քամալյան) և Աննա Արևշատյանի «Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և գեղագետ» (հեղինակ՝ արվ. թ. Գայանե Ամիրաղյան) աշխատությունները:

2021 թ. հոբելյանական էր Արվեստի ինստիտուտի աշխատակիցների համար: Հունիսի 3-ին լրացավ ինստիտուտի թատրոնի բաժնի վարիչ, «Արվեստագիտական հանդեսի» խմբագրական խորհրդի անդամ, Արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման 016 մասնագիտական խորհրդի նախագահ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվ. դ., պրոֆ. Հենրիկ Հովհաննիսյանի ծննդյան 85-ամյա հոբելյանը, որը համընկավ նրա՝ Արվեստի ինստիտուտում ծավալած գիտական գործունեության 60-ամյա հոբելյանի հետ: Հանդեսի 1-ին համարում հետաքրքիր ձևաչափով՝ հարցազրույցի տեսքով լուսաբանվում են Հ. Հովհաննիսյանի ներդրումը թատերագիտության մեջ, ինստիտուտի դերն ու նշանակությունը նրա կյանքում և այլ հարցեր: Նոյեմբերի 7-ին լրացավ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվ. դ., պրոֆ. Աննա Արևշատյանի, իսկ հունիսի 23-ին՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ., երաժշտագետ-ֆոլկլորագետ Մարիաննա Տիգրանյանի հոբելյանները: «Արվեստագիտական հանդեսի» 2-րդ համարում Ա. Աստրյանը ներկայացրել է երաժշտագետների բեղուն գիտահետազոտական և մանկավարժական գործունեությունը:

Յուրահատուկ և նորարարական «Ստեղծագործում են արվեստաբանները» բաժինը ներկայացնում է վաստակաշատ գիտնականների ուշագրավ նվաճումները ստեղծագործական ասպարեզում: Հանդեսի 2-րդ համարում, ռուս գրականության դասական Նիկոլայ Նեկրասովի ծննդյան 200-ամյա հոբելյանի շրջանակներում առաջին անգամ տպագրվեցին նրա երեք բանաստեղծությունների՝ Ա. Աղասյանի ինքնատիպ թարգմանությունները:

Առանձին հիշատակման է արժանի հանդեսի շապիկների ձևավորումը, որն իրականացրել է Մարտին Հարությունյանը: Ըստ մտահղացման՝ դրանք զարդարում են Արվեստի ինստիտուտին առնչվող արվեստի գործեր: Ուշագրավ է, որ ներկայացվող երկու համարները պսակեցին ինստիտուտի նվիրյալների դիմանկարները. Աննա Աստրյանը՝ ՀՀ ժողովրդական նկարիչ Փարավոն Միրզոյանի (2021, կտավ, յուղաներկ) և ինստիտուտի կերպարվեստի բաժնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվ. դ., պրոֆ. Վիգեն Ղազարյանը՝ ՀՀ ժողովրդական նկարիչ Արամ Իսաբեկյանի (2017, կտավ, յուղաներկ) աչքերով:

Գրախոսությունն արդեն պատրաստ էր, երբ տեղեկացանք, որ համաձայն ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի նախագահ Կարեն Քեռյանի 2022 թ. փետրվարի 1-ի № 09Ա հրամանի՝ «Արվեստագիտական հանդեսն» ընդգրկվել է ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ԲՈԿ-ի կողմից 2022 թ. ընդունելի գիտական հրատարակությունների ցանկում:

Հանդեսի նախաձեռնողներին, աջակիցներին, հեղինակներին, մաղթում եմ

հետագա ծրագրերի անխափան իրականացում և շարունակական ընթացք:

Նկատենք, որ 2019 թ. հիմնադրված վեցամսյա պատկերազարդ պարբերականը հասանելի է նաև էլեկտրոնային տարբերակով Արվեստի ինստիտուտի և հայկական թվային գրադարանի կայքերում[2]*:*

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆ

Արվ. թ., ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունը՝ XX դարի հայ մշակույթ: Հեղինակ է շուրջ 30 հոդվածի: margaritakamalyan@gmail.com

[2] *Տե՛ս* http://arts.sci.am/reports.php?langid=1,https://arar.sci.am/dlibra/publication/301163 *և* http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Journalofstu dies 2019/2019(1).pdf.